



ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի վարիչ (2016-ից), Երևանի պետական համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի երկար տարիների դասախոս, նույն ամբիոնի վարիչ (1997–2013 թթ.), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիանա Սամվելի Հովսեփյանը հայ լեզվաբանության հենասյուներից ու ճանաչված ղեմքերից էր:

Ծնվել է 1941 թ. Երևանում, 1958 թ. ավարտել է Երևանի Ն. Կ. Կրուպսկայայի անվան թիվ 19 միջնակարգ դպրոցը, 1963 թ. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 1964–1967 թթ. սովորել է ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական («Միջին հայերենի հոլովման համակարգը»), իսկ 1988 թ. դոկտորական («Գրաբարի բառակազմական կաղապարները») ատենախոսությունները: Մեծ է նրա ներդրումը լեզվի և լեզվաբանության տարբեր բնագավառներում:

Լ. Հովսեփյանը եղել է Լեզվի ինստիտուտի գիտական քարտուղար, հայոց լեզվի պատմության, տիպաբանական-գույադրական հետազոտությունների բաժինների վարիչ (1981–1986 թթ.), գիտական գծով տնօրենի տեղակալ (1990–1995 թթ.), V դարի հայերենի պատմական բառարանի խմբի ղեկավար, հայերենի ստուգաբանական բառարանի թեմատիկ խմբի առաջատար գիտաշխատակից, «Տարբերակայնության դրսևորումները հայերենի զարգացման տարբեր փուլերում» թեմայի բաժնի վարիչ:

Նրա հետաքրքրությունների շրջանակում էին հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, բառարանագրության, հայոց լեզվի կառուցվածքային և պատմական տիպաբանության, լեզվի ձևայնացված նկարագրության ու կաղապարման, ժամանակակից մեթոդների կիրառման, գրական լեզվի նորմավորման խնդիրները: Լեզվաբանի գրչին են պատկանում «Անունների հոգնակին միջին գրական հայերենում» (1970 թ.), «Միջին հայերենի հարցերը լեզվաբանական գրականության մեջ» (1968 թ.), «13-րդ դարի հայերեն ձևագրերի հիշատակարանների լեզուն» (1997 թ.), «Գրաբարի բառակազմությունը» (1987 թ.), «Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում» (1982 թ.), «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության. հատոր Բ», «Հոլովում» բաժինը (1975 թ.), «Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը» (2016 թ.), «Դասական գրաբարի շարահյուսական կառուցվածքը» (2021 թ., անտիպ) մենագրություններն ու բազմաթիվ արժեքավոր հոդված-

ներ, որոնք չափ ու չափ լեզվաբանների, տարբեր բուհերի բանասիրական ֆակուլտետներում դասավանդող դասախոսների և ուսանողների սեղանի գրքերն են ու ուղեցույցը:

Անվանի գիտնականին՝ որպես գրաբարի հմուտ մասնագետի, 1987 թ. հրավիրել են Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան՝ գրաբարի դասընթաց վարելու: Լ. Հովսեփյանը հայոց լեզվի զարգացման բուլոր փուլերի՝ գրաբարի, միջին գրական հայերենի, ժամանակակից հայոց լեզվի քաջահմուտ մասնագետն էր: Նրա կատարած աշխատանքներն աչքի են ընկնում նյութի խորությամբ, սպառիչ քննություններ, հայագիտության բնագավառում նորագույն մեթոդների արդյունավետ կիրառմամբ:

Հայ լեզվաբանության նվիրյալն իր գիտահետազոտական աշխատանքներում ներկայացնում է նախ միջին հայերենի, այնուհետև գրաբարի քերականական կառուցվածքը՝ դրանցում կիրառելով ընդհանուր լեզվաբանության մեջ նորագույն շրջանում մշակված որակական ու քանակական մի շարք մեթոդներ, կատարում վիճակագրական հետազոտություններ: Լ. Հովսեփյանի հրատարակած յուրաքանչյուր գիրք կամ հոդված ներկայացնում է տվյալ ոլորտի ամբողջական պատկերը: Նա տիրապետում էր հին ու նոր մի շարք լեզուների՝ հին հայերենին, հին հունարենին, լատիներենին, ռուսերենին, քաջատեղյակ էր նախորդ և ներկա փուլերում կուտակված լեզվաբանությունը վերաբերող նյութերին ու ձեռքբերումներին, որոնց շնորհիվ գիտական ակտիվ գործունեություն էր ծավալում ապահովելու ընդհանուր լեզվաբանության արդի փուլի մակարդակը:

Լ. Հովսեփյանը ակտիվորեն մասնակցում էր հայերենագիտական միջազգային գիտաժողովներին՝ սկսած կազմակերպչական աշխատանքներից մինչև թեզիսների ու հոդվածների հրապարակումը: Իր գիտահետազոտական գործունեությանը զուգընթաց երկար տարիներ զբաղվում էր նաև գիտամանկավարժական գործունեությամբ: Նրան Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում ընդունելով որպես դասախոս՝ կարճ ժամանակ անց շնորհում են նախ դոցենտի, ապա պրոֆեսորի կոչում (2013-ից), հետո ընտրվում ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ: Վաստակաշատ պրոֆեսորը վայելում էր դասախոսների և ուսանողների ամենաջերմ, անկեղծ սերն ու համակրանքը: Նա մեծ պատասխանատվությամբ և նվիրվածությամբ պատրաստում էր նոր սերնդի գիտական կադրեր՝ սեփական օրինակով ցույց տալով, թե ինչպիսին պետք է լինի մեր ժամանակի հայերենագետն ու դասախոսը: Սիրով ու պատրաստակամությամբ ղեկավարում էր ուսանողների ավարտական աշխատանքները, մագիստրական թեզերը և մի շարք ասպիրանտների ու հայցորդների ատենախոսությունները: Ահա այսպես բազմաթիվ ուսանող-ուսանողուհիներ են կրթվել ու աճել նրա ձեռքի տակ՝ իրենց արժանի տեղը գտնելով թե՛ գիտության, թե՛ այլ բնագավառներում:

Լ. Հովսեփյանն իր գիտամանկավարժական գործունեությանը զուգընթաց զբաղվում էր նաև թարգմանությամբ: Նա հայերեն էր թարգմանում ռուս լավագույն բանաստեղծների, հատկապես Պուշկինի՝ իր հոգուն մոտ ու հարազատ ստեղծագործությունները, որոնք, ցավոք, մնացին անտիպ:

Ավանդ, այսօր արդեն Լիանա Սամվելի Հովսեփյանը՝ ճանաչված լեզվաբան, անվանի մանկավարժ, սիրված դասախոս, ազնիվ ու նվիրված ընկեր, հազվագյուտ մարդ, մեզ հետ չէ։ Բայց թողած արժեքավոր աշխատանքներով, հարազատների, շրջապատի նկատմամբ ունեցած հոգատարությունը ու սիրով կա ու կլինի մեզ հետ՝ մեր կողքին։ Նրա գիտական վաստակը բոլոր ժամանակներում էլ կունենա իր ծանրակշիռ տեղը հայ լեզվաբանական գրականության մեջ և չի կորցնի արդիականությունը։

ՕՖԵԼՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ